ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2008 թվականի N 329-Ն

ԱՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԻ ՎԻԶԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ ՄԻԱՅՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ ԵՎ ՄԻԱՅՆ ՀՐԱՎԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Համաձայն «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել այն պետությունների քաղաքացիների, ինչպես նաև ճամփորդական փաստաթուղթ ունեցող այլ անձանց ցանկը, որոնք Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա կարող են ստանալ միայն օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում՝ միայն հրավերի հիման վրա՝ համաձայն հավելվածի:

(1-ին կետը խմբ. 03.02.11 N 171-Ն)

1.1. Սահմանել, որ Չինաստանի և Հնդկաստանի քաղաքացիները և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա կարող են ստանալ միայն օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում և հյուպատոսական հիմնարկներում՝ նաև առանց հրավերի:

(1.1 կետը լրաց. 03.02.11 N 171-Ն)

2. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝

1) եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել սույն որոշմամբ սահմանված պետությունների՝ ծագումով հայ և որոշակի կատեգորիայի այլ քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետություն հատուկ պայմաններով մուտքի վիզա ստանալու կարգը.

2) թույլատրել Եգիպտոսում և Սիրիայում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների և հյուպատոսական հիմնարկների ղեկավարներին նշված պետությունների քաղաքացիներին և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձանց Հայաստանի Հանրապետության մուտքի վիզա տրամադրել նաև առանց հրավերի՝ դրա մասին տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը.

3) սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տեղեկատվությունն ստանալուց հետո այն տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը:

(2-րդ կետը փոփ., լրաց. 03.02.11 N 171-Ն)

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2008 թ. ապրիլի 11
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
ապրիլի 4-ի N 329-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ԱՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ՈՒՆԵՑՈՂ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ, ՈՐՈՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԻ ՎԻԶԱ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԱՆԱԼ ՄԻԱՅՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ՝ ՄԻԱՅՆ ՀՐԱՎԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

1. Աֆղանստանի քաղաքացիներ և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք
2. Բանգլադեշի քաղաքացիներ և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք
3. Կամերունի քաղաքացիներ և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք
4. Եգիպտոսի քաղաքացիներ և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք
5. Իրաքի քաղաքացիներ և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք
6. Նիգերի քաղաքացիներ և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք
7. Նիգերիայի քաղաքացիներ և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք
8. Պակիստանի քաղաքացիներ և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք
9. Սաուդյան Արաբիայի քաղաքացիներ և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք
10. Սոմալիի քաղաքացիներ և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք
11. Շրի Լանկայի քաղաքացիներ և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք
12. Սուդանի քաղաքացիներ և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք
13. Սիրիայի քաղաքացիներ և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք
14. Վիետնամի քաղաքացիներ և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք
15. Նեպալի քաղաքացիներ և ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք
16. Պաղեստինյան ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձինք

(Հավելվածը լրաց. 24.12.09 N 1503-Ն, խմբ. 03.02.11 N 171-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**